ՏՈՒՆԿԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ
ՀԱՅԵՐԷՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ԳՆԴԱԾԱՂԻԿ, ԲԱՐՁՈՒԵՆԵԱԿ
ՕՇԻՆԴՐ, ԵՂԵՒԻՆ, ՏԱՐԽՈՒՆ

ԳՆԴԱԾԱՂԻԿ· Artemisia vulgaris L.
ԲԱՐՁՈՒԵՆԵԱԿ· Artemisia abrotonum L. aurone. *արաբ. կայսում* قيسوم, *հապագ էր բայի* جبق الراعى, *պարսկ. Բևրենշասիֆ, Բույի Մատերան* بوى دراون, *Թրք. ղրվան չիչեկի.*
ՕՇԻՆԴՐ· Artemisia absinthium L. *Գերմ.* Wermuth, *պրսկ. ափսենթին* افسنتين, *գեսիրէ* دسره, *Թրք. փելին օրու.*
ԵՂԵՒԻՆ· Artemisia santonica, semen contra. *պարսկ. շիհ* شيح, A. Pontica *Քրդ.* خراسانى شيح قركى, *Հայ եղեւին* ارمنى شيح, *Թրք. կարա դենիզ փելինի.*
Տարխուն. – A. Dracunculus L. Estragon.

Գնդածաղիկները, բարդ կցածաղիկներու (composées synanthérées) *բազմաթիւ են իրենց տեսակներով. տարածուած են երկրի զանազան մասերուն մէջ։ Ընդհանուր անունով* armoiseը *կը կոչենք գընդածաղիկ, յիշուած Մխիթար Գոշի ԼԳ. առակին մէջ. առհասարակ մանր կլորակ ծաղիկներու ողկոյզներ կը կազմեն տունկին վերեւ շարուած, սպիտակ կամ դեղին կարմրագոյն, մէջտեղի ծաղիկները երկսեռ* (hermaphrodites), *իսկ շուրջինները ամուլ կամ արու։*

Armoise *անունը կու գայ Արտեմիս կամ Դիանա, Անահիտ աստուծու անունէն* (Artemisia)։

Համեմային տունկեր են, փոքր ինչ դառնահամ, որոնց ծաղկած գլուխներէն կ'ընեն տաք դեղաջուր (infusion), *մարսողութիւնը դիւրացունելու կամ պաղատութեանց հետեւանքն արգիլելու համար.*

Գնդածաղիկն է ի մասնաւորի Artemisia vulgaris L. *որ կը կոչուի ժողովրդական բառով* herbe de la St. Jean, *կամ* couronne de la St. Jean (*Յովհաննու ոտնի խոտ կամ պսակ*). *կը ժողովին Յովհաննու Մկրտիչի ոտնին, որ տեղի կ'ունենայ յունիս ամսոյ մէջ աշնան գիշերահաւասարին. և տարի մը կը պահեն տանը մէջ իբրեւ բարեբաստիկ, ինչպէս որ այժմ կաթողիկէ եկեղեցւոյ մէջ ծաղկազարդին, այսինքն զարնանամուտին* (équinoxe du Printemps), *օրհնուած ոսկեղի ճիւղեր կը բերեն տուն և կը պահեն տարի մը, մինչեւ հետեւեալ ծաղկազարդը։*

Բրիստոնէութենէ յառաջ Անահտայ նուիրուած էր այս տունկը իբրեւ պահպանիչ սրբութեան և իր բազմաթիւ բժշկական յատկութեանց համար՝ «Մայր ամենայն բուսոց կ'անուանուէր» (Հայբուսակ)։

Յովհաննէս անունը շատ հին է, ան էր բաբելացւոց աստուածներու հայրը։

Բրոզ, զոր Եսեբոս կը յիշէ, կ'ըսէ որ Յովհաննէս (oes *կամ* oanès) *կը ներկայանար որպէս կէս ձուկ, կէս մարդ. առաւօտուն ծովէն կ'ելլէր և երեկոյին ծովը կը մտնէր նորէն. անիկա էր որ մարդոց սորվեցուց քաղաքակրթութեան առաջին տարրերը։ Յովհաննէս արեգակն է, ինչպէս մեր Վահագնը. տնոր կը պարտինք կեանքը երկրի վրայ։*

Յովհաննէսի ոտնը կը կատարուի երկու արեւադարձներուն (solstice), *դեկտեմբերի վերջը, Յովհաննու Կարապետ կամ աւետարանիչ, այսինքն սերմանող, և Յունիսի վերջերը, Յովհաննէս Մկրտիչ, այսինքն հնձող։*

ՕՇԻՆԴՐ· – Artemisia Absinthium L. herbe Sainte. *բազմամեայ խոտ է, ամեն տեղ կը բուսնի, խոպան հողերու վրայ, ճամբաներու եզերքը. ցօղունը կարմրկեկ, խոռոչաւոր. տերեւները՝ երեսը կանաչ է, ետեւը ճերմակիկ, փոքր ինչ մազոտ, լայն և ճեղքրտուած. զօրաւոր հոտ ունի և համեմային, խիստ լեղի է. ապրը համար Աստուածաշունչի մէջ առ հասարակ թարգմանուած է դառնարիւն, փոխանակ օշինդրի (Երրայեցերէն ԼԱ՛ ԱՆԱՀ) Յայտնութիւն Ա. 11. Առակք Ե. 4. Երեմիա Թ. 15. Երկրորդում Օրինաց ԻԹ. 18. Ողբ Գ. 15, 19. Ամովս Ե. 7. Զ. 13։*

Մեծապէս օգտակար է բժշկութեան մէջ. ախորժարար է, մարսողական, դաշտանաբեր, միզեցուցող, ջերմահալած (fébrifuge) *և ճճիասպան։ Կը գործածուին տերեւները և ծաղկած գլուխները։*

ԲԱՐՁՈՒԵՆԵԱԿ· Artemisia abrotonum L. (armoise mâle, herbe royale). – *Օշինդրին յատկութիւններն ունի, սակայն նուազ զօրաւոր, կիսարոնի հոտ ունի, թթու քաղուրայի, լեղի է. տերեւները ճնճղկէն, բարակ. դեղին ծաղիկ. կը մշակուի պարտէզներու մէջ, կը ծաղկի օգոստոսին։*

Բարձուեենեակը զօրացուցիչ (stimulant) *է, քրտնաբեր, դաշտանաբեր, ճճիասպան. ջերմի դէմ իր դեղաջուրը օգտակար է, դուրսէն կը գործածուի զարշահոտ կեղերու* (ulcère) *դէմ։*

Սալածորեցին կը յիշէ.

«Բարձուեենեակին հոտն է պակաս,
«հոտիկն այնուշ է բեչարուն
«քանց ամենն խոնարհ կու կենայ,
«կը բուսնի ծաղկանց հեռուն»։

ԵՂԵՒԻՆ· (*Artemisia Santonica* L., semen contra. A. Judaïca, A. Pontica, A. Armeniaca. – *շատ կարեւոր է, սա է որ կը գործածուի մանաւանդ փոքր ճճիներու դէմ,* Santenine, Semen contra *անունով. տերեւները կը ժողովեն ծաղկած ատեն և կը չորցունեն. երկու ծաղկած ատեն և կը չորցունեն. երկու տեսակ դառն նիւթեր կը պարունակէ. մին՝ բորակածնային* (azotée), *միւսը ռետնային* (résineuse). *շատ տեսակները կան, հրէական, պոնտական, ծովային, հայկական. վերջին տեսակն է ամէնէն յարգին շիհ խորասանի անունով։*

ՏԱՐԽՈՒՆ· Artemisia Dracunculus L. estragon. *համեմ է, կանաչ տերեւները և մատղաշ ծղօտները կը համեմեն. լաւ հոտ կու տան աղցանին, կարգ մը կերակուրներու. քացախին մէջ կը դնեն վարունկի պահածոներուն. ծաղիկները ամուլ են մշակուած տունկերուն մէջ. մէջը տարխուն զրուած աղցանները՝ աղի և քացախի պէտք չունին, քանզի տարխունն անոնց համն ունի և կծու. կը յանձնարարուի զժուարամարսութիւն ունեցող և աղէ զուրկ՝ կերակուր ուտող հիւանդներուն* (régime déchloruré). *երկարակեաց բոյս է, բաժնուած ճիւղերը տնկելով* (bouturage) *կը շատացունեն։*

Կայ նոյնպէս գնդածաղկի լեռնային մէկ տեսակը Ալպեան սառնարաններուն մէջ որ կը կոչուի Génépi։

ԳՆԴԱԾԱՂԻԿ· – *Պետեւեան այս անունով կը կոչէ օշինդրը* (Artemisia absinthium L. *ինչպէս նաեւ Եղեւինը* (Artemisia Santonica L.) *իր* Illustrated Polyglottic Dictionary of plant names. Cairo. Argus et Papazian Press. 1936 *գործին մէջ։*

Քաջունիի բառարանն ալ ունի նոյն գնդածաղիկ բառը միեւնոյն նշանակութեամբ, միայն թէ տարակոյսով։ Իսկ Հայբուսակ կը զրէ միայն. «Գնդածաղիկ ըստ Գաղիանոսի բառից նոյն է ընդ Բարձուեենեակի»։

Գնդածաղիկ բառը պարզապէս գրչագրի սխալ է, զրուած՝ փոխանակ Գնդածաղիկի. զայս կ'ապացուցանէ Նորայր իր Քննադատութիւն Հայրուսակի աշխատութեան մէջ. էջ 100. (*Վիեննա. Մխիթարեան տպարան* 1925)։

Դոկտ. ՅՈՎՀ. ԱՐԹԻՆԵԱՆ

10 *Ապրիլի* 1948
Ամերիկա-Լէ-Գոնեսս.

digitised by A.R.A.R.@